ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Ե. Պ. ԱՂԱՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Լրացավ սովետական ականավոր պատմաբան, ակտիվ հասարակական գործիչ, Լենինյան և Պետական մրցանակների դափնեկիր, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Իսահակ Իսրայելովիչ Մինցի ծննդյան 80-ամյակը։

Ի. Մինցը ծնվել է 1896 թ. փետրվարի 3-ին, Դնեպրոպետրովսկի մարզի Կրինիչկի գյուղում, ծառայողի ընտանիքում։ 1917 թ. ապրիլին Ի. Մինցն ընդունվել է մեծ Լենինի կուսակցության շարքերը։ Նույն թվականի դեկտեմբերին նա արդեն մարտընչում էր կարմիր գվարդիայի, ապա նաև՝ կարմիր բանակի շարքերում։ 1920 թ. Ի. Մինցը 1-ին հեծելազորային կորպուսի կոմիսարն էր։ Այդ կորպուսը քաղաքացիական կռիվների փառաբանված հերոս Վ. Մ. Պրիմակովի հրամանատարությամբ խոշոր հաղթանակներ տարավ։ Ի. Մինցը, պայմանների բերումով, հաճախ փոխարինում էր կորպուսի հրամանատարին, դրսևորելով անձնական խիզախության փայլուն օրինակներ։

Քաղաքացիական կռիվների տարիներին ռազմի դաշտում և գաղափարական ճակատում, հատկապես կադետների, էսէռների, մենշևիկների, ինչպես նաև ազգայնական տարրերի դեմ մղած պայքարում ձևավորվում է Ի. Մինցի մարքսիստական աշխարհայացքը։ Քաղաքացիական կռիվների ավարտից հետո նա շարունակում է աշխատանքը կարմիր բանակում և 1923 թ. նշանակվում կարմիր բանակի ռազմա-օդային ակադեմիայի կոմիսար։ 1926 թ. Ի. Մինցն ավարտում է կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտի պատմության բաժանմունքը և նշանակվում այդ նույն ինստիտուտի դիրեկտորի տեղակալ ու պատմության բաժանմունքի ղեկավար։ Նա միաժամանակ ղեկավարում է ինստիտուտի լենինիզմի ամբիոնը և դասախոսում լենինյան միջազգային դասընթացներում։

Վ. Ի. Լենինը սոցիալիստական հեղափոխության, քաղաքացիական կռիվների և սովետական իշխանության ամրապնդման պատմության ուսում-

նասիրումը կարևորագույն խնդիր էր համարում[1]։ 1920-ական թվականներից սկսած այդ հարցերը դարձան կարմիր պրոֆեսուրայի, կուսակցության պատմության ինստիտուտի և Յ. Մ. Սվերդլովի անվան կոմունիստական համալսարանի ուսումնասիրության հիմնական խնդիրները։ Սովետական պատմաբանների առաջին սերնդի ականավոր ներկայացուցիչներից մեկը Ի. Մինցն էր։ Նա արդեն Հոկտեմբերի և քաղաքացիական կռիվների պատմության ճանաչված մասնագետ էր, երբ 1931 թ. նշանակվեց «Քաղաքացիական կռիվների պատմության» գլխավոր խմբագրության քարտուղար և եռանդուն աշխատանք ծավալեց քաղաքացիական կռիվների պատմությունն ստեղծելու համար։ Կոմունիստական ակադեմիայի նախագահությունը 1936 թ. Ի. Մինցին շնորհեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1939 թ. նա ընտրվեց ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, իսկ 1946 թ.՝ իսկական անդամ։

Բազմաբեղուն գիտական աշխատանքի հետ մեկտեղ (շուրջ 300 գիտական աշխատություն) շատ արդյունավետ է եղել Ի. Մինցի դասախոսական աշխատանքը։ Նա երկար տարիներ ղեկավարել է ՍՍՀՄ պատմության ամբիոնը՝ Լոմոնոսովի անվան պետական համալսարանում, Ջերնիշևսկու անվան Մոսկվայի պատմա-փիլիսոփայական և գրականության ինստիտուտում, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր բարձրագույն կուսակցական դպրոցում, Վ. Ի. Լենինի անվան Մոսկվայի պետական մանկավարժական ինստիտուտում, դասախոսել է հասարակական գիտությունների ակադեմիայում և այլն։ Նա պատրաստել է գիտության ավելի քան 200 դոկտորներ և թեկնածուներ, մեծ է նրա երախտիքը ազգային կադրերի պատրաստման գործում։

Ակադեմիկոս Ի. Մինցի կարևորագույն ուսումնասիրությունները նվիրված են Մեծ Հոկտեմբերի և քաղաքացիական կռիվների պատմությանը։ Նա մեծ ուշադրություն է նվիրել նաև առաջին համաշխարհային պատերազմի, Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության և միջազգային հեղափոխական շարժումների կարևորագույն պրոբլեմների լուսաբանմանը։ ՍՄԿԿ պատմության բազմաթիվ հարցեր միանգամայն նոր լուսաբանում և գիտական հիմնավորում են ստացել Ի. Մինցի աշխատություններում։ Նա առաջիններից մեկը գիտական շրջանառության մեջ դրեց կարևոր շատ փաստաթղթեր և չուսումնասիրված նյութեր։ Ի. Մինցը հատկապես ուշադրություն է դարձրել այնպիսի հարցերի մշակմանը, ինչպիսիք են դասակարգային ուժերի դասավորությունը Հոկտեմբերի նախօրյակին, սովետների՝ որպես պետական օրգանների ծագումն ու ձևավորումը, սովետական իշխանության հաստատումը տեղերում և նրանց տարբեր ձևերով հանդես գալու բարդ պրոցեսը։ Նա իր «Английская интервенция и северная контрреволюция» մենագրության մեջ, ինչպես նաև երկհատոր «История гражданской войны» աշխատության համապատասխան բաժիններում և բազմաթիվ ուրիշ հոդվածներում բացահայտել է իմպերիալիստական տերությունների կազմակերպած հակասովետական ինտերվենցիայի տնտեսական ու քաղաքական հիմքերը, հետապնդած նպատակները, մերկացրել մենշևիկների, էսէռների և հակասովետական այլ կուսակցությունների թշնամական-հակաժողովրդական գործունեությունը։

---

[1] В. И. Ленин, Полн. собр. соч., т. 50, стр. 66, т. 51, стр. 176.

Ռենեգատ Կաուցկին հանդես գալով սովետական իշխանության դեմ, դավաճանաբար հայտարարում էր, թե դեմոկրատիայի զարգացման համար անհրաժեշտ է «ճանապարհից հեռացնել բոլշևիզմը»։ Հեղափոխության դավաճանի այդ հորջորջանքների դեմ, որոնց նպատակն էր վերացնել համաշխարհային հեղափոխական շարժումների կենտրոնը, Ի. Մինցը հանդես է եկել դեռևս 1931 թ.՝ «Կաուցկին—ինտերվենցիայի գաղափարախոս» հոդվածով։ Այդ հոդվածում Ի. Մինցը խիստ պամֆլետային ոճով մերկացնում է Կաուցկու սոցիալ-շովինիստական հայացքները[2]։ Մեկ այլ հոդվածում մերկացնելով պատմության, հատկապես Հոկտեմբերյան հեղափոխության պատմության ամերիկյան կեղծարարներին, Ի. Մինցը նշում է, որ նրանք այն դարձրել են ռազմական բիզնեսի առարկա[3]։

Հոկտեմբերյան հեղափոխության պատմության բուրժուական կեղծարարների հակասովետական տեսակետները հիմնովին քննադատված են Ի. Մինցի ղեկավարությամբ հրատարակված «Зарубежная литература об Октябрьской революции» ժողովածուում։ Այն սկսվում է Ի. Մինցի հոդվածով, որտեղ հեղինակն արտասահմանում Հոկտեմբերյան հեղափոխության պատմության ուսումնասիրությունը բաժանում է մի շարք շրջանների։ Բոլոր շրջաններում էլ Հոկտեմբերի գնահատման շուրջը կատաղի պայքար էր մղվում պրոլետարական և բուրժուական գաղափարախոսությունների միջև։ Առաջին շրջանում (1917—1921) բուրժուական պատմաբանները ելնելով աջ սոցիալ-դեմոկրատիայի դիրքերից, ամեն ջանք գործադրել են խեղաթյուրելու Հոկտեմբերյան հեղափոխության բնույթն ու նշանակությունը։ Արդեն երկրորդ շրջանում (1921—1929) մարքսիստական պատմագրությունն արտասահմանում ուսումնասիրում է հեղափոխության այնպիսի կարևորագույն հարց, ինչպիսին է բոլշևիկների ստրատեգիայի և տակտիկայի միջազգային նշանակությունը։ Այդ բնագավառում հսկայական է միջազգային հեղափոխական շարժման այնպիսի գործիչների ներդրումը, ինչպիսիք են Ու. Ֆոստերը, Կ. Ցետկինը, Է. Թելմանը, Վ. Կոլարովը և ուրիշներ։ Իսկ բուրժուական պատմագրության մեջ այդ շրջանում թեև շարունակվում էր Հոկտեմբերի գնահատման կեղծարարությունը, բայց և այնպես նկատելի էր նաև ռեալիստական ուղղության հանդես գալը։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, միջազգային մասշտաբով ՍՍՀՄ հեղինակության հսկայական աճի և Հոկտեմբերյան հեղափոխության նկատմամբ առաջացած մեծ հետաքրքրության պայմաններում, բուրժուական պատմագրությունն ամեն կերպ ջանում է մերժել Հոկտեմբերյան հեղափոխության պատմական անխուսափելիությունն ու միջազգային նշանակությունը։ Սակայն մի շարք բուրժուական պատմաբաններ փաստերի ճնշման տակ ստիպված էին նշելու Հոկտեմբերի միջազգային նշանակությունը։ Այդ շրջանում մեծ չափով աճեց արտասահմանում հրատարակվող մարքսիստական գրականությունը։ Հոկտեմբերյան հեղափոխության պատմության ուսումնասիրությունը հատկապես մեծ թափ ստացավ սոցիալիստական երկրներում։ Հոկտեմբերի գաղափարն ընդգրկեց միլիոնավոր մասսաների և

---

[2] И. Минц, Каутский—идеолог интервенции («Большевик», 1931, № 4).

[3] И. И. Минц, Новейшие упражнения американских фальсификаторов истории СССР («Вопросы истории», 1953, № 11, стр. 106).

դրանով իսկ «դարձավ հասարակության նյութական ուժ»[4]։ Իր մեկ այլ աշխատության մեջ՝ նվիրված Հոկտեմբերի միջազգային նշանակությանը, Ի. Մինցը գրել է. «սովետական կարգերի հաղթանակը հիմք հանդիսացավ համաշխարհային հեղափոխության հետագա զարգացման համար»[5]։

Պատմական գրականության մեջ առաջիններից մեկը խորապես ուսումնասիրելով քաղաքացիական կռիվների պատմությունը, Ի. Մինցը մերժեց այն թյուր կարծիքը, թե իբր իմպերիալիստական տերությունների կազմակերպած ինտերվենցիայի պատճառը Ռուսաստանի պատերազմից դուրս գալն էր, կամ պահանջը՝ վճարել ցարական կառավարության պարտքերը։ Մինչդեռ հիմնական պատճառը իմպերիալիստների վախն էր այն բանի հանդեպ, որ արթնացող և պայքարի դրոշ բարձրացնող պրոլետարիատը կարող էր կրկնել Հոկտեմբերի օրինակը մյուս երկրներում. «ահա թե ինչն էր առաջին հերթին որոշում իմպերիալիստական գիշատիչների գործելակերպը»[6]։

Ի. Մինցը դեռևս 1930-ական թվականներին գիտական խոր վերլուծության է ենթարկել ինտերվենցիայի պատճառները ու բացահայտել ոչ միայն Անգլիայի ու Ֆրանսիայի, այլև ԱՄՆ-ի հակասովետական գիշատիչ քաղաքականության էությունը։ Նրանք ամեն կերպ ցանկանում էին խանգարել Բրեստի հաշտությունը, որպեսզի գերմանական իմպերիալիզմի միջոցով խեղդեն սովետական իշխանությունը։ Բրեստի հաշտությունից հետո միջազգային իմպերիալիզմի հակասովետական ինտերվենցիան ավելի սանձազերծվեց։ Ի. Մինցը եզրակացրել է, որ Հեռավոր Արևելքում ճապոնական իմպերիալիզմի ձեռնարկած ինտերվենցիան տեղի է ունեցել ԱՄՆ-ի հրահրանքով ու համաձայնությամբ[7]։ Ի. Մինցը ցույց է տվել նաև անգլո-ամերիկյան հակասություններն Անդրկովկասում։ ԱՄՆ-ը նաև պլանավորում էր ստեղծել Դոնի, Թերեքի, Աստրախանի կազակային մարզերի հակասովետական ֆեդերացիա, որին հետո պետք է միանային Ուրալի կազակները և Ուկրաինան[8]։

Ակադեմիկոս Ի. Մինցի ուսումնասիրությունների մյուս կարևոր բնագավառը սովետական պետության և կոմունիստական կուսակցության լենինյան արտաքին խաղաղասիրական քաղաքականության լուսաբանումն է։ Նա «История дипломатии» բազմահատոր աշխատության մի շարք գլուխների հեղինակ է։

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Ի. Մինցը հանդես եկավ ֆաշիստական ագրեսիան մերկացնող հոդվածներով ու աշխատություններով։

Զափազանց խոշոր է Ի. Մինցի վաստակը պատմա-կուսակցական թեմատիկայի մշակման ասպարեզում։ Նա որպես հեղինակ և գլխավոր խմբագրության անդամ ակտիվ մասնակցություն է ունեցել ՍՄԿԿ պատմության

---

[4] И. И. Минц, Основные этапы изучения истории Великой Октябрьской социалистической революции за рубежом («Зарубежная литература об Октябрьской революции», М., 1961, стр. 32).

[5] И. И. Минц, Великая Октябрьская социалистическая революция и ее международное значение, М., 1955, стр. 31.

[6] И. И. Минц, Новая интервенция в свете старой, М.—Л. 1931; стр. 12.

[7] И. И. Минц, К десятилетию неудачи интервенции («Историк-марксист», 1929, № 11, стр. 93).

[8] И. И. Минц, Разгром первого заговора американских, англо-французских и других империалистов против Советской власти («Ученые записки МГПИ им. В. П. Потемкина», т. XXVI, вып. 3, М., 1953, стр. 32—33).

բոլոր հրատարակություններին և հատկապես վեցհատորյակի պատրաստմանը։

ՍՍՀՄ 12 հատորանոց պատմության ստեղծման գործում ևս ակադեմիկոս Ի. Մինցը իր լուման ունի։ Նա բազմահատորյակի գլխավոր խորհրդի անդամ է և VII հատորի պատասխանատու խմբագիրը։

Ի. Մինցի «История Великого Октября»[9] եռահատոր ֆունդամենտալ ուսումնասիրությունը նրա երկարամյա ստեղծագործական աշխատանքի հանրագումարն է, որն արժանացավ Լենինյան մրցանակի։ Այս աշխատության մեջ հենվելով սովետական պատմագրության հաջողությունների վրա, հեղինակը վերլուծել և գիտական շրջանառության մեջ է դրել մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր ու այլ կարգի շատ նյութեր։ Աշխատության առաջին հատորը նվիրված է Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությանը։ Սոցիալ-տնտեսական, դասակարգային ուժերի դասավորության և միջազգային հարաբերությունների վերլուծության միջոցով հեղինակը լուսաբանել է լենինյան հանճարեղ տեսության հիման վրա բուրժուա-դեմոկրատական հեղափոխության վերաճման պրոցեսը սոցիալիստականի։

Երկրորդ հատորը վերաբերում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստմանն ու հաղթանակին, բուրժուական ժամանակավոր կառավարության տապալմանն ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմանը։

Աշխատության երրորդ հատորը բացահայտում է սովետական իշխանության հաղթական երթի բարդ ու բազմապիսի պրոցեսը։

Ակադեմիկոս Ի. Մինցը գիտական խոր վերլուծության ենթարկելով երկրի սոցիալիստական և ռազմա-քաղաքական դրությունը, հանգում է այն հետևության, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ժողովրդական զանգվածների տնտեսական քայքայումը ոչ միայն արագացրեց նրանց հեղափոխականացումը, այլև տեղի ունեցավ արտադրության համակենտրոնացում, զարգացավ պետական մոնոպոլիստական կապիտալը։ Հետևապես, պատերազմը նպաստեց սոցիալիզմի նյութական նախադրյալների հասունացմանը և դրանով իսկ արագացրեց հեղափոխության ծավալումը։ Մեծ չափերի հասավ արտադրության հասարակական բնույթի և կապիտալիստական արտադրական հարաբերությունների միջև սրվող հակասությունը։

Աշխատության մեջ Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պատկերվում է որպես Հոկտեմբերի նախադուռ և ցույց տրվում նրա վերաճումը սոցիալիստականի։ Հեղինակը գիտականորեն հիմնավորել և բազմակողմանի լուսաբանել է բոլշևիկյան կուսակցության ծավալած տիտանական աշխատանքը ցարիզմը տապալելու համար մասսաներին կազմակերպելու և ղեկավարելու գործում։ Դրանով իսկ մերժվում է բուրժուական կեղծարարների այն պնդումը, թե իբր ինքնակալությունն ընկել է «ինքն իրեն»։ Իրականում ցարիզմին տապալող ուժը պրոլետարիատն էր, որն օրինակ տվեց ժողովրդական լայն մասսաներին, իսկ բուրժուազիան և նրա կուսակցություններն ամեն կերպ խանգարում էին հեղափոխության ծավալմանը, ցանկանալով այն ծառայեցնել իրենց շահերին։ Նոր նյութերի հիման վրա Ի. Մինցը համոզիչ կերպով մերկացնում է ժամանակավոր կառավարության կեղծ դեմոկրատիզմը։

---

[9] И. И. Минц. История Великого Октября, М., т. I, 1967, т. II, 1968, т. III, 1973.

Աշխատության երկրորդ հատորում հեղինակը ցույց է տալիս Հոկտեմբերի նախօրյակին երկրում ստեղծված անչափ բարդ վիճակը։ Այդ պայմաններում դրությունը կարող էր փրկել միայն բոլշևիկյան կուսակցության իմաստուն քաղաքականությունը, նրա ճիշտ ստրատեգիան և տակտիկան։ Հեղինակի կողմից Վ. Ի. Լենինի դերի բազմակողմանի բացահայտումն ու լուսաբանումը՝ որպես հանճարեղ տեսաբանի և հեղափոխության առաջնորդի, խոշորագույն ներդրում է պատմագրության մեջ։ Մասսաներին կազմակերպելու և պայքարի դուրս բերելու գործում, նշում է Ի. Մինցը, վճռական դեր խաղաց «Ամբողջ իշխանությունը սովետներին» բոլշևիկյան լոզունգը։

Ապրիլյան թեզիսներում Վ. Ի. Լենինի առաջադրած անհապաղ դեմոկրատական հաշտություն, հողի ազգայնացում, բանվորական վերահսկողություն արտադրության ու մթերքների բաշխման վրա և ազգերի ինքնորոշման իրավունք պահանջներն ամբողջովին արտահայտում էին ժամանակի խնդիրները։ Այդ բոլոր հարցերին տրված են Լենինյան դիրքերին հարազատ ու տեսական ընդհանրացումներով հարուստ լուսաբանում։ Հեղինակը ոչ միայն բազմակողմանի լուսաբանել է Մեծ Հոկտեմբերի պատմությունը, այլև ցույց է տվել բուրժուազիայի հակահեղափոխական գործելակերպը, բնութագրել բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների (կադետների, մենշևիկների և էսէռների) ստրատեգիական պլանները, որոնց նպատակն էր ամրապնդել կապիտալիզմի դիրքերը։ Ակադեմիկոս Ի. Մինցը այդ պրոբլեմը քննում է լայն պլանով և ցույց տալիս, որ բոլշևիկները ոչ միայն մերկացրին այդ կուսակցություններին, այլև շախշախիչ հարված հասցրին նրանց։ Աշխատության մեջ հեղինակը ցույց է տալիս հակահեղափոխական միասնական ճակատի ստեղծումը—սկսած բուրժուա-կալվածատիրական ռեակցիայից մինչև մենշևիկներն ու էսէռները, քայլ առ քայլ բացահայտում է ներքին հակահեղափոխական ուժերի բլոկը իմպերիալիստական տերությունների, հատկապես Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հետ։

Երկրորդ հատորում կարևորագույն տեղ է հատկացվում ամբողջ երկրով մեկ ծավալվող հեղափոխական մասսայական շարժումների նկարագրությանը։ Դրանք բանվորական, գյուղացիական, զինվորական հեղափոխական ելույթներ և ազգային ազատագրական շարժումներ էին։ Այդ բոլոր շարժումների մեջ դեմոկրատական-սոցիալիստական տենդենցը գերակշռող և միավորող դեր էր կատարում։ Բոլշևիկյան կուսակցության հմուտ ղեկավարության շնորհիվ հեղափոխական բոլոր ջոկատները միավորվում էին ընդհանուր շղթայի մեջ և բանվոր դասակարգի ղեկավարությամբ պայքարն ուղղում բուրժուազիայի ու կալվածատիրության իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար։

Հեղինակը մեծ տեղ է հատկացրել ռուսաստանյան բանվոր դասակարգի բնութագրմանը, հեղափոխության մեջ նրա ավանգարդային դերի բացահայտմանը։ Աշխատության մեջ լայնորեն է լուսաբանվել սոցիալիստական հեղափոխության հաղթանակի էտապում աշխատավոր գյուղացիության շրջանում բոլշևիկների ծավալած աշխատանքը և բանվոր դասակարգի դաշինքի ամրապնդումը չքավոր գյուղացիության հետ։

Աշխատության մեջ կարևոր տեղ է հատկացվում բանվորական գործադուլներին, որոնցում ավելի ցայտուն կերպով են արտահայտվում տնտեսական և քաղաքական հակասությունները, դասակարգային պայքարի սրվա-

ծությունը։ Նկարագրվում են նաև գյուղացիական ու զինվորական ելույթները, որոնք արտահայտվում էին տարբեր ձևերով ու մեթոդներով։ Հեղինակը ցույց է տալիս համառուսաստանյան ամենուր ծավալվող պայքարի ընդհանուր օրինաչափությունն ու ընթացքը։

Ի. Մինցը ամենայն խորությամբ է ուսումնասիրել լենինյան ստրատեգիայի ու տակտիկայի հարցերը։ Ելնելով ապստամբությունը որպես արվեստ դիտելու լենինյան դրույթից, հեղինակը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել է զինված ապստամբության լենինյան պլանը, բացահայտել է Վ. Ի. Լենինի տեսական ընդհանրացումների պատմական նշանակությունը։ Հատկապես ապստամբությունը սկսելու համար հարմար պահի ընտրությունը չափազանց կարևոր նշանակություն ուներ։ Հեղինակը համոզիչ փաստերով և հետևողականորեն մերկացնում է Կամենևի, Զինովևի և Տրոցկու դավաճանական, շտրեյկբրեխերական դիրքորոշումը ու նշում, որ մասսաները գնում էին բոլշևիկների ետևից, իսկ կուսակցության Կենտկոմի մոտ 85%-ը պաշտպանում էր զինված ապստամբությունն սկսելու լենինյան առաջարկը[10]։

Ակադեմիկոս Ի. Մինցը մանրամասն քննել է պրոլետարական դեմոկրատիայի դասակարգային բնույթը և նրա վերաբերմունքը պրոլետարիատի դիկտատուրայի նկատմամբ։ Հայտնի է, որ պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիներն ամեն կերպ ցանկանում էին այն փոխարինել այսպես կոչված «համասեռ սոցիալիստական կառավարությամբ»։ Դրանով նրանք ցանկանում էին բոլշևիկներին մղել երկրորդական պլանի վրա և հեռացնել ղեկավար դիրքերից։ Երբ այդ պլանը ձախողվեց, նրանք արդեն իրականություն դարձած «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգին հակադրեցին «Ամբողջ իշխանությունը օրենսդիր ժողովին» լոզունգը, նպատակ հետապնդելով վերջ տալ սովետների իշխանությանը։ Շնորհիվ լենինյան կուսակցության հմուտ և իմաստուն քաղաքականության, դավաճանական այդ քայլը ևս խափանվեց։ Հեղինակը կուսակցության ղեկավար դերի և պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ մեկ կամ մի քանի կուսակցությունների սիստեմի առկայության խնդիրը քննում է լայն ֆոնի վրա և եզրակացնում, որ տարբեր պատմական պայմաններում այդ հարցերը լուծվում են տարբեր ձևով։ Սակայն միանգամայն ակնհայտ է և օրինաչափ, եզրահանգում է նա, որ հասարակության սոցիալիստական վերափոխման պայմաններում ղեկավար ուժը կարող է լինել միայն ու միայն մարքսիստական կուսակցությունը։

Հեղինակի այդ ֆունդամենտալ ուսումնասիրության երրորդ հատորը, որ ամբողջովին նվիրված է սովետական իշխանության հաղթական երթին, լուսաբանում է այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են սովետական կարգերի հաղթանակն ու ամրապնդումը Մոսկվայում, հակահեղափոխական ուժերի ջախջախումը, սովետական իշխանության պայքարը համընդհանուր դեմոկրատական հաշտության համար, սովետական իշխանության հաստատումը տեղերում, տնտեսական խոշոր վերափոխումների սկիզբը։ Աշխատությունն ավարտվում է «Սովետական դեմոկրատիայի հաղթանակը» եզրափակիչ բաժնով։ Այստեղ հատկապես նշվում է, որ օրենսդիր ժողովը որպես բուրժուական պառլամենտարիզմի ձև իրեն սպառում և վերացվում է։ Կարևոր են հեղինակի գրույթները բազմազգ սոցիալիստական պետության ստեղծման, սովետական իշխանության լենինյան ազգային քաղաքականու-

10 И. И. Минц, История Великого Октября, т. II, стр. 955.

թյան բնագավառում ձեռք բերած հաջողությունների և այլ հարցերի վերաբերյալ։

Հոկտեմբերի փորձը ցույց է տալիս, որ անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ օրինաչափ երևույթ է, որ բխում է մարքս-լենինյան՝ հասարակական-տնտեսական ֆորմացիաներին վերաբերվող ուսմունքից։ Այդ անցումը կատարվում է ոչ թե ռեֆորմների, այլ հեղափոխության՝ հին կարգերի տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծման միջոցով։ Այդ է այն կարևոր եզրակացությունը, որին հանգում է հեղինակը։

Թե՛ գիտական հարցերի լայն ընդգրկումով ու խորը ընդհանրացումներով և թե՛ նոր փաստական նյութի հարստությամբ ակադեմիկոս Ի. Մինցի եռհատոր աշխատությունը խոշոր ավանդ է սովետական պատմագրության մեջ։ Այդ ֆունդամենտալ աշխատությունն օգնում է հակահարված տալու բուրժուական կեղծարարներին, հակակոմունիզմի ջատագովներին։

1935 թ. սկսեցին լույս տեսնել Ի. Մինցի սովետական հասարակության պատմության դասընթացները և առաջին հերթին քաղաքացիական կռիվների պատմությունը[11]։ Այդ դասընթացները մոտ 20 տարի բուհերի պատմության ֆակուլտետների ուսանողների և կուսակցական դպրոցների ունկնդիրների միակ ուսումնական ձեռնարկն էին։ Դրանք լայն տարածում էին գտնում նաև ընթերցող մասսաների շրջանում։ Ուշագրավ է նաև 8-րդ դասարանի համար Ի. Մինցի կազմած ՍՍՀՄ պատմության դասագիրքը, որը նշանակալից դեր է խաղացել մատաղ սերնդին ոչ միայն անհրաժեշտ պատմական գիտելիքներ հաղորդելու, այլև սովետական հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում։ Այդ դասագիրքը մի քանի անգամ վերահրատարակվել է։ Այն հրատարակվել է նաև Հունգարիայում, Լեհաստանում ու Ճապոնիայում։ Ի. Մինցի մի շարք ուրիշ աշխատություններ ևս հրատարակվել են օտար լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, չինարեն և այլն։

«Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության պատմությունն» կոմպլեքսային պրոբլեմային գիտական խորհրդի ստեղծման օրից Ի. Մինցը նրա անփոփոխ նախագահն է և մեծ հմտությամբ ղեկավարում է այդ կարևորագույն պրոբլեմի ուսումնասիրության ու կոորդինացման գործը ոչ միայն ՍՍՀՄ-ում, այլ նաև սոցիալիստական սիստեմի երկրներում։ Այդ խորհուրդն արդեն հրատարակել է մի շարք կարևոր աշխատություններ[12]։

Գիտական խոշոր ծառայությունների համար ակադեմիկոս Ի. Մինցը արժանացել է սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, պարգևատրվել Լենինի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի և Աշխատանքային Կարմիր դրոշի երկու շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով։

Չնայած պատկառելի տարիքին նա ապրում է ստեղծագործական բուռն կյանք և իր ուժերն ու գիտելիքներն անխնա նվիրաբերում է սովետական պատմական գիտության հետագա զարգացմանը։

---

11 И. И. Минц, Гражданская война в Советском Союзе («Курс истории СССР». М., 1936).

12 «Зарубежная литература об Октябрьской революции», М., 1961; «Рабочий класс и рабочее движение в России в 1917 г.», М., 1964; «Ленин и Октябрьское вооруженное восстание в Петрограде», М., 1964; «Победа Советской власти в Закавказье», Тбилиси, 1971.